«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 7 Լ

ք. Երևան 10 մայիսի 2012թ.

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը և 84-րդ հոդվածի 1-ին կետի “է” ենթակետը, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության խորհուրդը

Որոշում է.

1. Թողարկել և տեղաբաշխել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտատոմսեր:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտատոմսերի թողարկման պայմանները և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանները՝ համաձայն հավելվածի (կցվում է):

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»

ՎՎԿ ՓԲԸ խորհրդի նախագահ՝ Արթուր Ջավադյան

ք. Երևան

---,------,2012թ.

Հավելված

Հաստատված է
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»
ՎՎԿ ՓԲԸ խորհրդի 2012 թվականի
Մայիսի 10-ի թիվ 7 Լ որոշմամբ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. <u>Պարտատոմսերի թողարկման պայմանները</u>

1.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական զեղչատոկոսային,
1.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային,
1.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի,
1.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 1,000,000,000.00 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ,
1.5 Պարտատոմսերի քանակը՝ 10,000.00 (տաս հազար) հատ,
1.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000.00 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,
1.7 Պարտատոմսերի թողարկման օրը՝ 2012 թվականի մայիսի 14,
1.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ 6 ամիս, հաշված տեղաբաշխման օրվանից,
1.9 Պարտատոմսերը տեղաբաշխվում են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» (այսուհետ՝ Կանոններ) սահմանված կարգով: Աճուրդը անցկացվում է մեկ անգամ:
1.10 Տեղաբաշխման օրը՝ 2012 թվականի հունիսի 7: Տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:

1.11 Պարտատոմսերի մարման օրը՝ տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ ամսվա համապատասխան օրն է: Եթե տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ ամսվա համապատասխան օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը,

1.12 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով,

1.13 Պարտատոմսերի մարման երաշխավորումը՝ պարտատոմսերի մարումը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից,

1.14 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ ապահովված են Ընկերության կողմից իր գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկերից բխող պահանջի իրավունքի գրավով: Ապահովվածություն հանդիսացող վարկերի ցանկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

N	ՎՀՊ-ի կնքման ամսաթիվ	ՎՀՊ-ի անվանում	ՎՀՊ-ի պայմ. գումար	ՎՀՊ-ի մարման ամսաթիվ	ՎՀՊ-ի մնացորդը 30.04.12թ. դրությամբ
1	25/03/11	ABB-035	47,227,508.90	20/03/20	43,558,670.50
2	10/06/11	ABB-038	39,351,019.80	22/06/20	37,214,261.10
			86,578,528.70		**80,772,931.60**
3	10/11/10	ADB-002	36,300,000.00	20/11/19	18,395,228.20
4	25/02/11	ADB-004	20,000,000.00	20/02/19	18,112,586.80
5	25/05/11	ADB-006	20,000,000.00	20/05/19	18,643,110.10
6	27/02/12	ADB-008	18,935,711.00	20/02/20	18,935,711.00
			95,235,711.00		**74,086,636.10**
7	27/09/10	AEB-010	53,305,557.50	20/09/19	37,331,478.10
8	27/12/10	AEB-012	62,078,173.10	20/12/19	49,057,910.00
			115,383,730.60		**86,389,388.10**
9	10/06/11	ANE-017	44,119,811.00	20/06/19	41,270,085.60
10	27/06/11	ANE-019	25,034,098.00	20/06/19	23,310,608.10
11	25/01/12	ANE-024	20,000,000.00	20/01/20	19,536,721.30
			89,153,909.00		**84,117,415.00**
12	13/07/10	ARA-008	33,000,000.00	22/07/19	28,371,609.70
13	11/10/10	ARA-009	79,519,579.50	21/10/19	57,027,994.60
			112,519,579.50		**85,399,604.30**
14	10/08/10	ARE-009	53,875,768.20	20/08/19	30,929,215.20
15	13/09/11	ARE-011	43,716,896.50	20/09/19	41,850,399.30
16	10/10/11	ARE-013	18,500,000.00	21/10/19	17,728,267.50
			116,092,664.70		**90,507,882.00**

17	25/06/10	ART-008	49,361,388.40	20/06/19	36,746,398.60
18	26/07/10	ART-009	23,351,313.50	22/07/19	19,741,401.70
19	10/08/10	ART-010	29,678,000.00	20/08/19	14,132,579.10
			102,390,701.90		**70,620,379.40**
20	25/01/11	ASB-009	40,439,682.50	20/01/20	38,661,579.20
21	25/02/11	ASB-010	46,504,590.00	20/02/19	42,115,920.80
			86,944,272.50		**80,777,500.00**
22	25/02/11	BBA-004	50,365,268.50	20/02/20	46,313,497.30
23	26/09/11	BBA-008	44,218,831.00	22/09/20	38,160,943.20
			94,584,099.50		**84,474,440.50**
24	26/04/11	CON-006	47,362,826.80	20/04/18	36,258,339.00
25	27/06/11	CON-007	51,035,747.80	20/06/17	43,370,736.20
			98,398,574.60		**79,629,075.20**
26	27/06/11	FMC-018	46,400,000.00	22/06/20	43,683,045.80
27	27/06/11	FMC-019	38,400,000.00	22/06/20	36,151,486.20
			84,800,000.00		**79,834,532.00**
28	11/07/11	GLB-018	20,000,000.00	22/07/19	18,707,985.20
29	25/08/11	GLB-020	18,500,000.00	20/08/20	17,790,367.60
30	25/04/12	GLB-028	45,364,534.00	20/04/21	45,364,534.00
			83,864,534.00		**81,862,886.80**
31	25/05/10	INE-007	43,971,310.50	20/05/19	28,383,391.10
32	25/06/10	INE-010	36,866,069.40	20/06/19	30,276,061.90
33	25/07/11	INE-020	28,053,694.00	20/07/18	25,768,176.10
			108,891,073.90		**84,427,629.10**
34	11/07/11	SWS-001	15,508,373.90	20/07/18	14,299,272.90
35	11/07/11	SWS-002	12,915,577.30	20/07/17	11,676,481.80
36	10/10/11	SWS-003	39,842,562.40	21/10/19	35,617,160.50
37	26/12/11	SWS-004	8,023,697.30	20/12/16	7,687,567.30
			76,290,210.90		**69,280,482.50**
38	10/06/11	UNI-001	40,177,267.70	22/06/20	37,995,643.80
			40,177,267.70		**37,995,643.80**
39	25/02/11	VTB-026	61,555,638.10	20/02/19	55,746,591.30
40	25/05/11	VTB-031	13,932,345.20	20/05/20	13,130,485.20
41	27/06/11	VTB-033	20,000,000.00	22/06/20	1,340,779.00
42	26/09/11	VTB-036	11,324,891.40	20/09/17	10,571,296.90
			106,812,874.70		**80,789,152.40**
Ընդամենը			**1,498,117,733.20**		**1,250,965,578.80**

*Համաձայն մարման ժամանակացույցերի մինչև 12.12թ.-ը վերոնշյալ վարկերի գծով մարումները կազմում են մոտ 62.1 մլն ՀՀ դրամ:

Եթե մինչև պարտատոմսերի մարումը ապահովվածություն հանդիսացող վարկերի ընդհանուր մնացորդը նվազում է տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր գումարից (անվանական արժեքով), Կազմակերպությունը համալրում է ապահովվածություն հանդիսացող վարկերի ցանկը նոր վարկով/վարկերով առնվազն տարբերության գումարի չափով,

1.15 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից:

1.16 Պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով: Պարտատոմսերի մարումն իրականացվում է մարման օրվան նախորդող օրվա ժամը 17-00–ի դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը մարման օրը հանձնարական է տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները (պարտատոմսերի անվանական արժեքով) փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված ՀՀ դրամով բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ): Կազմակերպությունը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ,

1.17 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Կազմակերպությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով:

2. <u>Պարտատոմսերի տեղաբաշխման և շրջանառության պայմանները</u>

2.1 Պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գնով և մարվում են անվանական արժեքով: Տեղաբաշխման և մարման գների տարբերությունը կազմում է ներդրողի եկամուտը: Կազմակերպության

պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

ԵԿ = (ԱԱ - Գ)/Գ x 360/Ժ x 100
Որտեղ,
Գ – պարտատոմսի գինն է,
ԱԱ – պարտատոմսի անվանական արժեքն է
Ժ – տեղաբաշխման և մարման օրերի միջև ընկած ժամանակահատվածն է, արտահայտված օրերով:

2.2 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում,

2.3 Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացնում է Կազմակերպությունը, սույն Պայմանների 1.9-րդ կետով սահմանված կարգով,

2.4 Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին ա) չի կարող ներկայացվել գնման ոչ մրցակցային հայտ, բ) չի կարող ներկայացվել լրիվ բավարարմամբ հայտ,

2.5 Կազմակերպությունը սահմանում է կտրման գին, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվում,

2.6 Կազմակերպությունը, մինչև աճուրդի անցկացման օրվա ժամը 17:00 իր պաշտոնական կայքում հրապարակում է աճուրդի արդյունքների մասին տեղեկատվություն, որը առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի կտրման գինը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը),

2.7 Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, ինչպես նաև աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, Բորսայի «Առևտրի ընդհանուր կանոններով» սահմանված ընթացակարգով: Տեղաբաշխումը կարող է չեղյալ կամ չկայացած համարվել Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» Գլուխ 21-ով սահմանված դեպքերում: